ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՈՒՂԵՐՁ

Մոսկվայի և համայն Ռուսիո ԿԻՐԻԼ պատրիարքի
Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետներին, հովիվներին,
սարկավագներին, վանականներին և հավատավոր բոլոր զավակներին

Միրեցյա՛լ ի Տեր հովվապետներ, ամենապատվակա՛ն երեցներ և սարկավագներ, աստվածասե՛ր վանականներ և միանձնուհիներ, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ Քրիստոսի Ծննդյան մեծ տոնի առթիվ:

Լուսավոր այս գիշերն ուրախանում է ողջ արարչագործությունը, քանզի *այժմ մոտենում է և գալիս Տերը՝ ժողովուրդների ակնկալությունը և աշխարհի փրկությունը* (կանոն հետընտրյաց ժամերգության Քրիստոսի Ծննդյան նախատոնակի): Երկար տարիներ Փրկչի գալուստն ակնկալել են մարդիկ, որոնք դրախտից արտաքսվելուց հետո կորցրել էին կապն Իրենց Արարչի հետ, մոռացել, ինչքա՛ն ուրախալի է ամեն օր զգալ Աստծո ներկայությունը և շատ մոտիկից լսել Նրա ձայնը, հնարավորություն ունենալ դիմել Նրան և միանգամից պատասխան ստանալ, իմանալ, որ դու լիակատար անվտանգության մեջ ես, որովհետև Տերը քո կողքին է:

Անվտանգության, պաշտպանվածության և հանգստության հենց այս զգացողությունը մեզ շատ է պակասում այսօր, երբ կործանարար համաճարակը դեռևս իր ճշտումներն է մտցնում մեր կյանքում, երբ դժվար է ինչ-որ բան կանխատեսել ու ծրագրեր կազմել, երբ անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ մշտապես պահում է լարվածության մեջ և տագնապ է առաջացնում: Սակայն դժվար այս հանգամանքներում մենք հատկապես սուր զգացինք մարդկային կեցության փխրունությունը, գիտակցեցինք, որ պետք է գնահատել յուրաքնչյուր նոր օրը՝ որպես Աստծո մեծագույն պարգև, հասկացանք, ինչպիսի ծանր բեռ է դառնում ստիպված միայնությունը և ինչքան կարևոր է հնարավորություն ունենալ՝ պարբերաբար անձնամբ շփվելու հարազատների և մտերիմների հետ:

Այժմ նայելով մսուրի մեջ պառկած Մանուկ Քրիստոսին, Նրա Ամենամբիծ Մորը և Հովսեփ Խոսնայրին՝ մենք հասկանում ենք, որ միայն Աստծո և մարդկանց հանդեպ սերն է կարող ամրացնել մեզ զանանան

փորձությունների մեջ, վանել վախը մեր սրտերից և ուժ տալ բարի գործեր կատարելու համար:

Քանզի Ամենասրբուհի Աստվածածինն Իր կյանքի ամենակարևոր պահերից մեկում նույնպես գտնվել է նեղ պայմաններում. օտար քաղաքում, ամայի վայրում, անասունների համար եղած քարայրում: Սակայն աղքատիկ *քարայրը Նրան երևաց որպես գեղեցիկ ապարանք* (շարական Նախատոնակի), որովհետև Նրա սիրտը լցված էր սիրով Որդու և Աստծո հանդեպ. այդ սերը փոխակերպում էր շուրջբոլորը, և Ամենամբիծ Կույսը չէր նկատում քարայրի ո՛չ անհարմարությունները, և ո՛չ էլ *ծայրագույն աղքատությունը*: Գոհությունն Արարչից և քնքշանքը նորածին Որդու հանդեպ Նրան թույլ էին տալիս դժվարություններն առոչինչ համարել և տեսնել Աստծո բարի նախախնամությունը բոլոր հանգամանքներում, որոնք ի վերուստ առաքում էր Նրան Տերը: Ինչքա՛ն է այն տարբերվում Աստծուց թույլ տրված փորձությունների մեր ընկալումից, երբ, օրինակ, շատերն ինքնամեկուսման ժամանակ նույնիսկ հարազատ տունն ընկալում էին որպես բանտ, ընկնում վհատության մեջ և ամեն ինչ տեսնում սև գույնով:

Այսօր մտովին կանգնելով Փրկչի մսուրի առջև, որի մոտ Արարչի կողքին է առկա ողջ արարչագործությունը՝ և՛ մարդիկ, և՛ կենդանիները, և՛ հրեշտակները՝ *Ամենասուրբ և Երեքարփին Արշալույսի ծառաները* (կանոն 5-րդ ձայնի երկուշաբթի առավոտյան ժամերգության), ինքներս զգանք, որ շրջապատված ենք Աստծո սիրով և համախմբված ենք Քրիստոսի շուրջ: Թոթափենք մեր հոգուց վախի և անվստահության, տագնապի և հուսահատության կապանքները, լսենք Աստվածորդու ձայնը, որ գալիս է մեղավոր երկիր և կանչում դեպի Իրեն *բոլոր հոգնածներին և բեռնավորվածներին*՝ նրանց *հանգիստ* խոստանալով (Մտթ. 11.28): Գալիս է և սովորեցնում մեզ ապրել այնպես, որպեսզի դրախտի կորուսյալ երանությունը նորից իրականություն դառնա, և նույնիսկ ավելին. որպեսզի մարդը կարողանա անհասանելի և խորհրդավոր կերպով միավորվել Տիրոջ հետ:

Երկրի վրա ծնված Երկնավոր Թագավորն (ստիքերոնք տոնի) արդեն ամեն ինչ արել է մեր փրկության համար: Մեզ մնում է միայն ընդունել Նրա սերը և պատասխանել նրան մեր արարքներով՝ կյանքով ըստ պատվիրանների և գթության գործերով, ամուր հավատքով և Աստծո հետ լինելու փափագով, պատրաստակամությամբ ոչ միայն առատ գթություններ ընդունելու Նրա Հայրական ձեռքերից, այլև հաստատ հույսով և վստահությամբ Նրա հանդեպ հաղթահարել այս կամ այն դժվարություններ:

Թանկագիններս, կրկին և կրկին շնորհավորում եմ ձեզ Քրիստոսի Ծննդյան առթիվ: «*Ոչ ոք հեռացված չէ մասնակցությունից այս ցնծության մեջ,* – վկայում է սուրբ Լևոն Մեծը, – *քանզի ուրախության առիթն համընդհանուր է բոլորի համար: Եվ թող ցնծա սուրբը, քանզի մոտենում է փառքին: Թող ուրախանա մեղավորը, որովհետև նրան ներում է շնորհվում*» (*Ճառ Ա. ի Ծնունդն Քրիստոսի*): *Թող Տերն շնորհի բոլորիդ հոգու և մարմնի առողջություն, անսպառ ուրախություն և ոգու զվարթություն, ամրացնի ձեր կողմից կատարվող աշխատանքների և հետագա երթի մեջ փրկության ուղիով. ամեն:*

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Սուրբ Ծնունդ
2021/2022 թ.
Մոսկվա